

**ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԵՋՐԵՐՎՈՂ ԱՆՈՐՈՇ ԴԻՄԱՎՈՐ ԵՎ
ԸՆԴՀԱՆՐԱՊԱՆ ԴԻՄԱՎՈՐ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Գուրգեն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանասիր. գիտ. դոկտոր
gxachatryan@yahoo.com

DOI: 10.57236/1829-0183-2023.1(28)-34

Համառոտագիր

Լեզվական փաստերը վկայում են, որ, կախված խոսքային իրավիճակից, միջին հայերենում 2-րդ դեմքով արտահայտվում են ոչ միայն ընդհանրական-դիմավոր, այլև անորոշ-դիմավոր միակազմ նախադասություններ, որոնք, արտահայտության պլանում որոշ ընդհանրություններ ունենալով հանդերձ, բովանդակային պլանում որոշակիորեն տարբերվում են ոչ միայն մեկը մյուսից, այլև միևնույն բայաձևերով արտահայտված երկկազմ նախադասություններից:

Նպատակ է հետապնդվում բացահայտելու հիշյալ նախադասությունների արտահայտության և բովանդակության պլանների մի շարք ընդհանրություններ ու տարբերություններ, երևան հանելու լեզվաբանական հետազոտությունների ուղեծրից առաջօր դուրս մնացած անորոշ-դիմավոր նախադասությունների այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունները:

Միջին հայերենի ուղղակիորեն մեջբերվող խոսքերում հանդիպող անորոշ-դիմավոր և ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասություններն արտահայտվում են անձ ցույց տվող առարկաների հետ կապակցման հնարավորությամբ օժտված բայերի հրամայական եղանակի եզակի կամ հոգնակի թվի 2-րդ դեմքով, սակայն, կախված տարբեր հանգամանքներից, գործածվում են խոսքային տարբեր իրադրություններում:

Դիտարկումներից եկել ենք այն եզրահանգման, որ իբրև ուղղակի խոսք գործածվող և 2-րդ դեմքով արտահայտված հաղորդակցական միավորների կազմության հարցում էական դեր կատարող հանգամանքներն են որոշակի խոսքային իրադրության և հեղինակի խոսքում հանգման խնդրի առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև տվյալ նախադասության իմաստային կողմը:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ միջին հայերեն, անորոշ-դիմավոր և ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասություններ, ուղղակիորեն մեջբերվող խոսք, հեղինակի խոսք, խոսքային իրադրություն, հանգման խնդիր:

**ANALYSIS OF INDEFINITE-PERSONAL AND GENERALIZED-
PERSONAL ONE-MEMBER SENTENCES IN DIRECT SPEECH OF
MIDDLE ARMENIAN**

G. K. KHACHATRYAN.

Doctor of Philological Sciences
gxachatryan@yahoo.com

ABSTRACT

The linguistic data testify that in the Middle Armenian language, depending upon the speech situation, not only the generalized-personal sentences are used in the second person, but also the one-member indefinite-personal ones, which, having several similarities in the aspect of expression, greatly differ in the aspect of their meaning not only from each other, but also from the two-member sentences with the same verb forms.

The given work aims to highlight the similarities and differences between the aspects of expression and content, to display the specificity of this type of indefinite-personal sentences which are yet not fully studied, thus remaining in the shadow.

In Middle Armenian, the indefinite-personal and generalized-personal one-member sentences, used in direct speech, are in the Imperative Mood of the second person singular or plural verbs, coordinated with the words naming people, thus being used in various speech situations, depending on the circumstances.

As a result of our research, we have come to the following conclusion: in the formation of the communication units expressed via second person and used in the function of the direct speech, great part is played by such circumstances as the presence or absence of indirect objects in some situations and in the author's words, as well as the semantic aspect of the given sentence.

Keywords and phrases: Middle Armenian, indefinite-personal and generalized-personal one-member sentences, direct speech, author's words, speech situation, indirect object.

**АНАЛИЗ НЕОПРЕДЕЛЕННО-ЛИЧНЫХ И ОБОБЩЕННО-
ЛИЧНЫХ ОДНОСОСТАВНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ
СРЕДНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА, ПРЕДСТАВЛЕННЫХ В ПРЯМОЙ
РЕЧИ**

Г. К. ХАЧАТРЯН.

д. филол. н.
gxachatryan@yahoo.com

Аннотация

Лингвистические факты доказывают, что в зависимости от речевой ситуации в среднеармянском языке во 2-м лице употребляются не только обобщенно-личные, но и неопределенно-личные односоставные предложения, которые, имея некоторые общие черты в плане выражения, в определенной степени могут различаться в

содержательном плане не только друг от друга, но и от двусоставных предложений, выраженных одинаковыми глагольными формами.

Наша цель состоит в том, чтобы выявить ряд общих черт и различий в планах выражения и содержания названных предложений, выявить характерные черты того типа неопределенно-личных предложений, которые остались за пределами лингвистических исследований.

Неопределенно-личные и обобщенно-личные сложные предложения, встречающиеся в прямой речи среднеармянского языка, выражаются во 2-м лице единственного или множественного числа повелительного наклонения глаголов, которые могут связываться с предметами, указывающими на лицо, но в зависимости от разных обстоятельств, они используются в разных речевых ситуациях.

В результате исследования мы пришли к выводу, что факторами, которые играют существенную роль в составе коммуникативных единиц, используемых в качестве прямой речи, выраженной во 2-м лице, являются наличие или отсутствие дополнения следствия в определенной речевой ситуации и в авторской речи с учетом смыслового аспекта данного предложения.

Ключевые слова и словосочетания: среднеармянский язык, неопределенно-личные и обобщенно-личные односоставные предложения, прямая речь, авторская речь, речевая ситуация, косвенное дополнение.

Նախաբան

Մինչև անցյալ դարի 50-ական թթ. ժամանակակից հայերենի բա-
յական միակազմ նախադասությունները ընդհանուր կերպով համարվել
են անենթակա կամ անդեմ խոսքեր և գերազանցապես ուսումնասիրվել
են՝ ըստ արտահայտության պլանի և առանց որոշակի դասակարգման
[1, էջ 371-373]:

Անցյալ դարի 2-րդ կեսից սկսած՝ շարահյուսագիտական աշխատու-
թյուններում մեծ տեղ է հատկացվում նաև ժամանակակից հայերենի
միակազմ կառույցների, այդ թվում նաև անորոշ-դիմավոր նախադասու-
թյունների համակողմանի ուսումնասիրությանը [4, էջ 12-15; 2, էջ 276-
279; 8, էջ 395-396; 3, էջ 478-481]: Անորոշ-դիմավոր միակազմ նախա-
դասություններն անհրաժեշտ չափով քննության են ենթարկվել նաև
գրաբարի և միջին հայերենի լեզվական նյութի հիման վրա [9, էջ 134-
138; 6, էջ 30-72]: Ասվածը հավաստումն է այն բանի, որ անորոշ-դիմա-
վոր նախադասությունների քերականագիտական ուսումնասիրության
առումով առայսօր կատարվել է արդյունավետ աշխատանք: Սակայն դի-
տարկումները ցույց են տալիս, որ հայերենի միակազմ նախադասութ-
յունների շարքում առկա են լեզվական իրողություններ, որոնք առայսօր
դուրս են մնացել լեզվաբանական հետազոտությունների ոլորտից: Խոս-

քը մասնավորապես միջին հայերենի՝ որպես ուղղակիորեն մեջբերվող խոսք գործածվող անորոշ-դիմավոր և ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասությունների համեմատական քննության մասին է, որին էլ նվիրված է սույն հոդվածը:

Առհասարակ, որպես անորոշ-դիմավոր կառույցների արտահայտության հիմնական միջոց առանձնացվում է միայն խոնարհված բայի հոգնակի թվի 3-րդ դեմքը [4, էջ 12; 5, էջ 72]: Ելնելով դրանից՝ Վ. Առաքելյանը և Ս. Գյուլբուդադյանը և ուրիշ լեզվաբաններ շեշտում են, որ ժամանակակից հայերենի անորոշ-դիմավոր նախադասություններն արտահայտվում են բոլոր եղանակներով ու ժամանակներով, բացի հրամայական եղանակից [4, էջ 12; 5, էջ 72]: Պ. Վարդապետյանը, բնութագրելով միջին հայերենի անորոշ-դիմավոր նախադասությունները, նշում է դրանց գերադաս անդամի ոչ միայն հոգնակի 3-րդ, այլև եզակի 2-րդ դեմքով արտահայտվելու մասին, սակայն որպես ասածի հիմնավորում բերում է միայն ըղձական եղանակի բայածևերով արտահայտված նախադասությունների օրինակներ [9, էջ 135-136; 4, էջ 17; 5, էջ 82-85; 6, էջ 37]¹:

Մինչդեռ լեզվական փաստերը վկայում են, որ անորոշ-դիմավոր նախադասությունների գերադաս անդամը գրական հայերենի բոլոր շրջաններում կարող է արտահայտվել նաև հրամայական եղանակի եզակի և հոգնակի թվերի 2-րդ դեմքով [7, էջ 27, 32; 6, էջ 36]: Եվ քանի որ նշված դիմաթվային ձևերով կարող են արտահայտվել նաև ընդհանրական-դիմավոր միակազմ, ինչպես նաև երկկազմ նախադասությունների գերադաս անդամները, ուստի անհրաժեշտություն է առաջանում քննությունը կատարել համեմատության միջոցով, որը կարող է տալ մի քանի առկախ հարցերի պատասխաններ, ինչն էլ քննվող թեմայի արդիականության վկայությունն է: Ուսումնասիրությունը կատարել ենք լեզվական փաստերի նկարագրության, համեմատության, հակադրման ու համադրման, ինչպես նաև արտածման մեթոդների կիրառմամբ:

Լեզվական նյութը քաղել ենք միջինհայերենյան աղբյուրներից, մասնավորապես՝ Վարդան Այգեկցու առակներից (ՎԱԱ), Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքից» (ՍՍԴ), Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» բժշկարանից (ԱԱՕԲ) և «Հայրեններից» (Հ), սա-

¹ Բերված կարգի նախադասությունները համարվում են ընդհանրական-դիմավոր: Մենք ևս վերջին կարծիքին ենք:

կայն հոդվածում առաջ քաշված տեսական դրույթները որոշ դեպքերում հիմնավորել ենք գրաբարյան և արդի հայերենյան լեզվական փաստերով նույնպես: Անհրաժեշտությունից ելնելով՝ որոշ բնագրային նախադասություններ բերել ենք մասնակի փոփոխություններով (այս դեպքում՝ առանց հղման)² չխաթարելով, սակայն, դրանց բուն կառուցվածքը և բովանդակությունը:

Միջին հայերենի միակազմ նախադասությունների արտահայտության միջոցները

Միջին հայերենում միակազմ նախադասության գերադաս անդամը կարող է արտահայտվել՝ ա) դիմասահմանափակ (միադիմի) բայերով, բ) անդիմասահմանափակ բայերով, գ) անդիմասահմանափակ բայերի դիմասահմանափակ կիրառությամբ և դ) այլ խոսքի մասերով՝ Յերբ լուսանայ, թող երթայ կտրէ .Խ. կաղնի ջալոտ (ՎԱԱ): Լո՛ւր ինձ. կա՛ց յոտն քո եւ առո՛ղջ կացիր եւ գնա լո՛ւծ քաշէ, որ չի գենեն գքեզ (ՎԱԱ): Եւ կուրացնել յերկու աչաց արժան է (ՍԳԴ): Եւ ասէ հաքիմն. խիստ քաջ. գնա՛ բեր դեկան մի, որ տամ սեւ միհամի եւ սպիտակ, որ ողջանայ (ՎԱԱ) [6, էջ 29]: Նշվածներից տվյալ դեպքում մեզ հետաքրքրում են անդիմասահմանափակ բայերով արտահայտվող նախադասությունները, որոնք հայտնի են որպես բայական դիմավոր միակազմ կառույցներ՝ անորոշ-դիմավոր և ընդհանրական դիմավոր տեսակներով: Թեև դրանց գերադաս անդամներն արտահայտվում են անդիմասահմանափակ բայերի խոնարհված ձևերով, սակայն այդպիսի նախադասություններ կարելի է կազմել՝ ա) ոչ բոլոր անդիմասահմանափակ բայերով, բ) անդիմասահմանափակ բայերի ոչ բոլոր դիմային ձևերով, գ) ոչ բոլոր խոսքային իրադրություններում:

Մասնավորապես՝ ա) հայ շարահյուսագետները նշում են, որ անորոշ-դիմավոր նախադասություններում գործողության ենթադրյալ ենթակա կարող են լինել անձ ցույց տվող առարկա կամ առարկաներ [4, էջ 12, 5, էջ 72, 9, էջ 135, 10, շ. 14]²:

² Վերջերս, սակայն, ռուս լեզվաբաններից Յիմմերլինգը նկատել է, որ անորոշ-դիմավոր նախադասություններում գործողության ենթադրյալ ենթակա կարող են լինել ոչ միայն անձնանիշ, այլև կենդանանիշ առարկա կամ առարկաներ: Հմտ. միջին հայերենի հետևյալ նախադասությունները. Ի՞նչ լամ, իմ հայր թագաոր, Ձագերս ի ծոցէս տարեր են (<, 611): «Ինտո՞ր չի լամ, որ ձագերս են տարած: Ձագերս բուներնէն տարած, Իմ սիրտս են էրած» (<, 804):

Անորոշ-դիմավոր և ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասությունների գերադաս անդամները կարող են արտահայտվել միայն այն անդիմասահմանափակ բայերով, որոնք դասանշային տեսանկյունից համադրելի են անձնանիշ ենթակաների հետ, այսինքն՝ օժտված են կա՛մ միայն անձնանիշ, կա՛մ նաև անձնանիշ առարկաների հետ կապակցման հնարավորությամբ:

բ) Լեզվական փաստերը վկայում են, որ անորոշդիմավոր և ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասությունների գերադաս անդամները վերոնշյալ խմբերի անդիմասահմանափակ բայերի ոչ բոլոր դիմային ձևերով կարող են արտահայտվել: Չհաշված մասնակի դեպքերը՝ հիշյալ նախադասությունների գերադաս անդամները գերազանցապես արտահայտվում են՝ 1) եզ. թվի 2-րդ դեմքով՝ Եւ ի թթու իրաց պատրաստ կեցիր, որ շատ օգտէ աստուծով (ԱԱՕԲ). 2) հոգն. թվի 2-րդ դեմքով՝ Եւ ամէն իրք որ զանձն տաքցնէ՝ ի գործ արկէք (ԱԱՕԲ): 2ի Քրիստոս հրամայեաց, թէ ձրի առէք եւ ձրի տուէք (ՎԱԱ). 3) հոգնակի թվի 3-րդ դեմքով՝ Զորօրինակ կրակ ձգեն ի յարդն, որ այրի. նոյնպէս մեղաւոր մարդն առանց խոստովանութեան

ի հուրն անշէջ անկանի (ՎԱԱ):

գ) Սակայն քանի որ նշված բայաձևերով արտահայտվում են ոչ միայն միակազմ, այլև երկկազմ նախադասություններ, ապա ստորև փորձենք հստակեցնել այն նախապայմանները, որոնց առկայությամբ միևնույն բայաձևը կարող է դառնալ մի դեպքում երկկազմ, մյուս դեպքում՝ անորոշդիմավոր միակազմ, իսկ երրորդ դեպքում՝ ընդհանրականդիմավոր միակազմ նախադասության արտահայտության միջոց:

Ուղղակիորեն մեջբերվող անորոշ-դիմավոր և ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասությունների համեմատական քննություն

Անորոշ-դիմավոր և ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասությունների գերադաս անդամների՝ 2-րդ դեմքով արտահայտված լինելն ինքնին ենթադրում է, որ դրանցով արտահայտված բոլոր նախադասությունները պետք է տեղ գտնեն հեղինակի խոսքերի հարևանությամբ, և այդ նախադասությունների միջոցով պետք է արտահայտվեն խոսակցին ուղղված և/կամ վերաբերող մեջբերվող խոսքեր, ինչը բնորոշ է երկխոսությունների ժամանակ ուղղակիորեն մեջբերվող կառույցներին: Սակայն լեզվական փաստերը ցույց են տալիս, որ վերը

նշված բայաձևերով արտահայտված ընդհանրական դիմավոր և անորոշ-դիմավոր միակազմ նախադասությունները, որոշ ընդհանրություններ ունենալով հանդերձ, բովանդակային և կառուցվածքային առանձնահատկություններով որոշակիորեն տարբերվում են ոչ միայն մեկը մյուսից, այլև միևնույն բայաձևերով արտահայտված երկկազմ նախադասություններից:

Առաջադիր խնդրի լուծման համար ստորև կդիտարկենք եզակի 2-րդ դեմքով արտահայտված «Մի՛ գըր խորհուրդն մարդոյ այտներ» (ՎԱԱ) և հոգնակի 2-րդ դեմքով արտահայտված «Բերէ՛ք զմար իմ» (ՎԱԱ) նախադասությունները՝ ուշադրություն դարձնելով, թե դրանք խոսքային ինչպիսի՛ իրադրություններում են գործածվում և, վերջին հանգամանքով պայմանավորված, ի՛նչ փոփոխություններ են կրում բովանդակության պլանում:

1. Եզ.թ. 2-րդ դեմքով արտահայտված «Մի՛ գըր խորհուրդն մարդոյ այտներ» նախադասությունը դիտարկենք որոշակի խոսքային իրադրության մեջ: Բնական է, որ ուղղակիորեն մեջբերվող այդ նախադասությանը զուգորդվում է հեղինակի խոսք նույնպես, որում բառային արտահայտություն ունի նաև հաղորդման (այսուհետև հանգման) խնդիր: Վերջինս ցույց է տալիս, թե ով է ասվելիք խոսքի հասցեատերը: Օրինակ՝ Ասէ հայրն ընդ որդին. «Մի՛ գըր խորհուրդն մարդոյ այտներ»: Ակնառու է այն փաստը, որ այս բարդ կառույցի ուղղակիորեն մեջբերվող խոսքը երկկազմ նախադասություն է, ինչը պայմանավորված է որոշակի խոսքային իրադրությամբ և, ամենակարևորը, հեղինակի խոսքում որոշակի հասցեատեր ցույց տվող ընդ որդին հանգման խնդրի առկայությամբ: Ընդ որում, այս գործածության մեջ «Մի՛ գըր խորհուրդն մարդոյ այտներ» նախադասությունը համարվում է երկկազմ՝ անկախ այն բանից՝ նրանում առկա՛ է քերականորեն արտահայտված ենթակա (դու), թե՛ այն ենթադրվում է տվյալ նախադասության բովանդակության պլանում և անհրաժեշտության դեպքում կարելի է վերականգնել:

2. Միևնույն «Մի՛ գըր խորհուրդն մարդոյ այտներ» նախադասությունը դիտարկենք դարձյալ հեղինակի խոսքի զուգորդությամբ, որում, սակայն, հանգման խնդիրը բառային արտահայտություն չունի և հնարավոր չէ վերականգնել, քանի որ այն տվյալ նախադասության բովանդակության պլանում չի ենթադրվում. Ասէ իմաստունն. «Մի՛ գըր

խորհուրդն մարդոյ այտներ»: Հեղինակի խոսքում որոշակի հասցեատեր ցույց տվող անդամի բացակայության պատճառով «Մի՛ գըռ խորհուրդն մարդոյ այտներ» նախադասությունը վերածվում է ընդհանրական-դիմավոր միակազմ կառույցի, ինչին, անշուշտ, նպաստում են այդ նախադասությամբ արտահայտված միտքը և այն, որ խոսող-խոսակից զույգի խոսակիցը բացակայում է, ուստի չի ապահովվում որոշակի խոսքային իրադրություն, և անհնար է դառնում վերականգնել «Մի՛ գըռ խորհուրդն մարդոյ այտներ» նախադասության կազմում բացակա ենթական:

Հարկ է ընդգծել, որ 1-ին և 2-րդ կետերում դիտարկված և այս կարգի նախադասությունների ընդհանրական արժեք ձեռք բերելու հարցում էական դեր ունեն նաև նրանցով արտահայտված մտքերը, որոնք կարելի է գործածել ոչ միայն որոշակի խոսքային իրադրության մեջ՝ այն ուղղելով որոշակի խոսակցի կամ խոսակիցների, այլև որոշակի խոսքային իրադրությունից դուրս՝ այն ուղղելով բոլորին: Հենց վերջին դեպքում էլ ձևավորվում է ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասություն, որի գերադաս անդամը հավասարապես կարող է արտահայտվել թե՛ եզակի և թե՛ հոգնակի 2-րդ դեմքով:

Նկատենք, որ եթե դիտարկվող նախադասությունը հանդես է գալիս միայնակ՝ առանց հեղինակի խոսքի զուգորդության, ապա դարձյալ ձեռք է բերում ընդհանրական արժեք՝ վերաբերելով բոլորին և վերածվելով ընդհանրական-դիմավոր միակազմ կառույցի, քանի որ այն դարձյալ գործածվում է որոշակի խոսքային իրադրությունից դուրս և խոսող-խոսակից զույգի բացակայության պայմաններում՝ «Գաղտնիքդ ոչ ոքի մի՛ խոստովանիր»: Այս դեպքում ևս անհնար է դառնում վերականգնել ենթական, քանի որ նմանատիպ կիրառություններում այն չի ենթադրվում:

3. Հոգն. թ. 2-րդ դեմքով արտահայտված «Բերե՛ք զմար իմ» նախադասությունը դիտարկենք որոշակի խոսքային իրադրության մեջ, այն է՝ հեղինակի խոսքի զուգորդությամբ, որի կազմում բառային արտահայտություն ունի նաև հանգման խնդիրը, ինչպես՝ Եւ նա ասէ պահնորդացն, թէ բերե՛ք զմար իմ: Կասկած չկա, որ այս կառույցում «Բերե՛ք զմար իմ» ուղղակի խոսքը թերի երկկազմ նախադասություն է (անհրաժեշտության դեպքում կարելի է վերականգնել այդ նախադասության դուք ենթական), և դա՝ շնորհիվ *պահնորդացն* հանգման խնդրի:

Կարևոր ենք, որ այստեղ ևս, ինչպես 1-ին կետում, հաղորդակցական միավորի երկկազմ լինելու հարցում էական դեր ունեն երեք հանգամանք՝ տվյալ նախադասության՝ որոշակի խոսքային իրադրության մեջ գործածելը, հեղինակի խոսքում հանգման խնդրի՝ բառային արտահայտություն ունենալը և տվյալ նախադասության իմաստային կողմը [7, էջ 58; 6, էջ 54]:

4. Հոգն. թ. 2-րդ դեմքով արտահայտված «Բերէ՛ք զմար իմ» նախադասությունը դարձյալ գործածենք հեղինակի խոսքի զուգորդությամբ և որոշակի խոսքային իրադրության մեջ, սակայն առանց հիշատակելու հանգման խնդրի, այսինքն՝ առանց հստակեցնելու, թե որոշակիորեն ո՛ւմ է ուղղված խոսքը՝ Եւ նա ասէ, թէ բերէ՛ք զմար իմ» (ՎԱԱ): Հանգման խնդրի բացակայության պատճառով խոսքի հեղինակի գործողությունն այստեղ որոշակի հասցեատեր չունի: Սակայն հետաքրքրականն այն է, որ, պայմանավորված խոսքային իրադրությամբ, այս դեպքում հասցեատեր են ենթադրվում ոչ թե բոլորը, ինչպես 2-րդ կետում դիտարկված նախադասության մեջ, այլ անորոշ անձինք, որոնց էլ ենթադրաբար կարելի է հասցեագրել խոսքը:

Որոշակի խոսակից կամ խոսակիցներ նշող հանգման խնդրի բացակայությամբ պայմանավորված՝ այս կարգի ուղղակիորեն մեջբերվող խոսքերը, որպես կանոն, պատասխան չեն ենթադրում: Բանն այն է, որ պատասխան խոսքի դեպքում անհրաժեշտություն կառաջանար հեղինակի խոսքում անպայման հիշատատակելու կամ ենթադրելու և վերականգնելու ենթական, ինչը, սակայն, հնարավոր չէ՝ պայմանավորված պատասխան խոսքին նախորդած կառույցի հեղինակի խոսքում հանգման խնդրի բացակայությամբ: Այլ կերպ ասած՝ 2-րդ դեմքով արտահայտված և ուղղակիորեն մեջբերվող այս կարգի նախադասությունները երկխոսության միավոր չեն դառնում, հակառակ դեպքում պատասխանողների դերում չեն կարող լինել նրանք, ում ենթադրաբար ուղղված է անորոշ դիմավոր միակազմ նախադասությամբ արտահայտված մեջբերվող խոսքը: Ասվածը հիմք է տալիս պնդելու, որ «Եւ նա ասէ, թէ բերէ՛ք զմար իմ» (ՎԱԱ) կառույցի ընդգծված և նման կարգի նախադասությունները ոչ թե թերի են (զեղչված ենթակայով երկկազմ), այլ անորոշ դիմավոր միակազմ, քանի որ նրանցում ենթական բացակայում է, և այն հնարավոր չէ վերականգնել:

Անկասկած է, որ «Բերէ՛ք զմար իմ» կարգի նախադասութեան՝ անորոշ դիմավոր միակազմի վերածվելուն նպաստում է նաև նրանով արտահայտված միտքը, որը ոչ բոլոր խոսքային իրադրություններում կարելի է գործածել: Լինելով առօրեական, իրավիճակային խոսք և ոչ թե առաձական բնույթի խորհուրդ, պատգամ և այլն՝ այն կարելի է ուղղել կա՛մ որոշակի, կա՛մ անորոշ անձանց՝ արդյունքում ստանալով, համապատասխանաբար, երկկազմ (ինչպես 3-րդ կետում) կամ անորոշ դիմավոր միակազմ (ինչպես այս դեպքում) նախադասություն:

2-րդ դեմքով արտահայտված անորոշ դիմավոր միակազմ նախադասությունները կարող են հանդես գալ միայն հեղինակի խոսքի զուգորդությամբ, այսինքն՝ խոսքի մեջ նրանք չեն կարող գործածվել որպես շարահյուսական ինքնուրույն միավոր, ինչն անմիջականորեն կապ ունի նրանցում արտահայտվող գործողության բովանդակության հետ: Բանն այն է՝ 2-րդ դեմքով անորոշ դիմավոր միակազմ նախադասություններում որոշակիորեն նշվում կամ խոսքային իրադրությունից ենթադրվում է նրանցով արտահայտված գործողության կատարման ժամանակը: Ավելին՝ այդ գործողությունը կատարելու կամ չկատարելու մասին սովորաբար հիշատակվում է տվյալ խոսքային հատվածին հաջորդող նախադասության մեջ, որը նույնպես անորոշ դիմավոր միակազմ կառույց է: Օր.՝ «Եւ նա ասէ. թէ բերէ՛ք զմար իմ» (ՎԱԱ) բարդ կառույցին հաջորդում է նրա հետ տրամաբանական, պատճառահետևանքային կապ արտահայտող միակազմ նախադասություն՝ «Եւ իբրև բերին», որը ևս հիմնավոր փաստարկ է 2-րդ դեմքով արտահայտված «բերէ՛ք զմար իմ» նախադասության անորոշ դիմավոր միակազմ լինելու մասին: Ահա այդ խոսքային հատվածն ամբողջությամբ՝ Եւ նա ասէ. թէ բերէ՛ք զմար իմ՝ զի համբուրեցից զնա: Եւ իբրև բերին, և նա խածեալ եհատ զքիթ մօրն (ՎԱԱ), որում ընդգծված և՛ առաջին, և՛ երկրորդ նախադասություններով արտահայտված գործողությունները ենթադրաբար վերագրվում են անորոշ անձանց կամ անձի³: Կարևոր ենք, որ նմանատիպ խոսքային հատվածներում 2-րդ դեմքով անորոշ դիմավոր միակազմ նախադասություններին սովորաբար հաջորդում են հոգնակի թվի 3-րդ դեմքով արտահայտվող անորոշ դիմավոր միակազմ կառույցներ:

³ Ի դեպ՝ այս հատվածում 3-րդ դեմքով արտահայտված գործողությունը ենթադրաբար կարելի է վերագրել ոչ միայն մի քանի, այլև մեկ անձի:

«Եւ նա ասէ. թէ բերէ՛ք զմար իմ» կառույցի ուղղակի խոսքի միակազմ լինելու մասին լավագույն փաստարկներից մեկն էլ նրա՝ անուղղակիի փոխակերպված տարբերակն է և նույնպես անորոշ-դիմավոր միակազմ կառույց (շարահյուսական համանշտություն), սակայն, բնական է՝ արտահայտված հոգնակի թվի 3-րդ դեմքով՝ Եւ նա ասէ, զի բերեն զմար իւր:

Ուղղակի խոսքով արտահայտված անորոշ-դիմավոր միակազմ նախադասությունների գերադաս անդամը հաճախակի հանդես է գալիս դիմավոր բայի հոգնակի թվի 2-րդ դեմքով, սակայն երբեմն այն կարող է հանդես գալ եզակի թվի 2-րդ դեմքով: Միջինհայերենյան աղբյուրներում նմանատիպ նախադասություն մեզ չի հանդիպել, ուստի բերենք գրաբարյան օրինակ՝ միաժամանակ նշելու, որ նմանատիպ կառույցները բնորոշ են գրական հայերենի այլ շրջաններին նույնպես: Խոսքը աստվածաշնչյան «Եւ ասէ Յովրամ. լծեա՛»⁴ նախադասության մասին է, որի կազմում չի հիշատակվում, թե ում է ուղղված խոսքը: Նրանում հանգման խնդիրը բացակայում է, սակայն խոսքային իրադրությունից ենթադրվում է, որ Հովրամի հրամանը (լծեա՛) ո՛չ որոշակի անձի է ուղղված, ո՛չ էլ ընդհանրական բնույթ ունի. այն ուղղված է անորոշ անձի (կամ անձանց): Ասվածի վկայությունը հենց նրան հաջորդող նախադասությունն է՝ «Եւ լծեցին կառս», որը նույնպես, ինչպես նրան նախորդող կառույցը, անորոշ-դիմավոր է, քանի որ արտահայտված գործողությունը նրանում ևս կարելի է ենթադրաբար վերագրել անորոշ անձի կամ անձանց, բայց ոչ որոշակի անձանց (ինչպես երկկազմ նախադասություններում) կամ ընդհանրապես բոլորին (ինչպես ընդհանրականդիմավոր միակազմ նախադասություններում): Հմմտ. նաև հետևյալ կառույցը՝ Թումանյանի «Անուշից».⁴Գյուղը բաժանվեց երկու բանակի/Հարա՛յ են տալիքաշի՛ հա, քաշի՛...»./ Ու դուրս քաշեցին զոռով երկուսին [11]:

Եզրակացություններ

Որպես ուղղակի խոսք գործածված հաղորդակցական միավորի միակազմ կամ երկկազմ լինելու հարցում էական դեր ունի երեք հանգամանք՝ ա) տվյալ նախադասության՝ որոշակի խոսքային իրադրության մեջ կամ նրանից դուրս գործածվելը, բ) հեղինակի խոսքում հանգման

⁴ Դ Թագ., Թ, 9:

խնդրի՝ բառային արտահայտություն ունենալը կամ բացակայությունը և գ) տվյալ նախադասությամբ արտահայտված միտքը:

Վերոբերյալ դիտարկումներից պարզ է դառնում, որ անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունների գործածության ոլորտներից մեկը ուղղակիորեն մեջբերվող խոսքն է: Որպես ուղղակիորեն մեջբերվող խոսք հանդես են գալիս 2-րդ դեմքով արտահայտված գերադաս անդամով անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունները, որոնք ունեն որոշ ընդհանրություններ, սակայն միմյանցից առանձնանում են նաև մի շարք տարբերություններով:

1. Ուղղակիորեն մեջբերվող անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունների միջև հիմնականում նկատելի են հետևյալ ընդհանրությունները.

ա) Անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունների գերադաս անդամն արտահայտվում է այն անդիմասահմանափակ բայերով, որոնք դասանշային տեսանկյունից համադրելի են կա՛մ միայն անձնանիշ, կա՛մ նաև անձնանիշ ենթակաների հետ: Գերադաս անդամի արտահայտության միջոցը հիշյալ բայերի 2-րդ դեմքն է⁵:

բ) Անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունների զուգորդությամբ հանդես եկող հեղինակի խոսքում հանգման խնդիրը, որպես կանոն, բառային արտահայտություն չունի և չի ենթադրվում, ինչն էլ հիմք է ծառայում, որ ուղղակիորեն մեջբերվող խոսքերը ձեռք բերեն ոչ թե երկկազմ, այլ միակազմ նախադասության արժեք:

գ) Անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասություններից հետո չի ենթադրվում պատասխան խոսք, ասել է՝ այդ նախադասությունների մասնակցությամբ երկխոսություններ չեն ձևավորվում, հակառակ դեպքում դրանք չեն լինի հիշյալ միակազմ նախադասություններով արտահայտված գործողություններին վերաբերող համարժեք պատասխաններ:

դ) Անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունները խոսքային այլ իրադրություններում և այլ կազմությամբ

⁵ Այս և հայտնի այլ դրույթներին (օր.՝ 2.4. ենթակետ) հղում չենք կատարում:

նախադասությունների զուգորդությամբ կարող են հանդես գալ որպես երկկազմ նախադասություններ:

2. Ուղղակիորեն մեջքերվող անորոշդիմավոր և ընդհանրականդիմավոր միակազմ նախադասությունները, որոնք արտահայտվում են 2-րդ դեմքի գերադաս անդամով, միմյանցից հիմնականում տարբերվում են հետևյալ հատկանիշներով.

ա) Անորոշ-դիմավոր միակազմ նախադասությունների գերադաս անդամը կարող է արտահայտվել դիմավոր բայի հոգնակի (հազվադեպ՝ եզակի) 2-րդ դեմքով, մինչդեռ ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասությունների գերադաս անդամը հավասարապես կարող է արտահայտվել թե՛ եզակի և թե՛ հոգնակի 2-րդ դեմքերով⁶:

բ) Անորոշ-դիմավոր միակազմ նախադասությունները հանդես են գալիս միայն հեղինակի խոսքի զուգորդությամբ, մինչդեռ ընդհանրականդիմավոր նախադասությունները կարող են հանդես են գալ թե՛

⁶ Հոգն. թ. 2-րդ դեմքով արտահայտված և ուղղակիորեն մեջքերվող անորոշդիմավոր միակազմ նախադասություններին բնորոշ հատկանիշներով բնութագրվում են նաև այդ նախադասությունների՝ անուղղակիորեն մեջքերվող և դարձյալ անորոշ-դիմավոր տարբերակները: Հմմտ. Եւ նա ասէ. թէ բերէ՛ք զմար իմ» և «Եւ նա ասէ, զի բերեն զմար իւր»: Երկու դեպքում էլ խոսողի գործողությունը որոշակի հասցեատեր չունի (պատճառը հանգման խնդրի բացակայությունն է), որը հիմք է տալիս պնդելու, որ «Եւ նա ասէ, զի բերեն զմար իւր» կառույցի ընդգծված նախադասությունը նույնպես ոչ թե թերի է (զեղչված ենթակայով), այլ անորոշ-դիմավոր միակազմ. նրանում բացակայում է, և հնարավոր չէ վերականգնել ենթական: Բերված երկու կառույցների տարբերությունն այն է, որ ուղղակիորեն մեջքերված նախադասության մեջ գերադաս անդամն արտահայտված է հոգնակի 2-րդ դեմքով (բերէք), իսկ անուղղակիորեն մեջքերված նախադասության մեջ՝ հոգնակի 3-րդ դիմային ձևերով (բերեն), որը պայմանավորված է նմանատիպ նախադասություններում կատարվող փոխակերպումով, որի ընթացքում կատարվում են նաև ստորոգյալների դիմային փոփոխություններ:

Հմմտ. նաև հետևյալ հատվածը՝ բերված միևնույն առակի այլ տարբերակից, որում պատումի հեղինակը շարադրանքն առաջ է տանում ոչ թե ուղղակիորեն կամ անուղղակիորեն մեջքերվող միակազմ խոսքով, այլ պատմողական հնչերանգով երկկազմ նախադասությամբ (Եւ նա ետ կոչել զմար իւր), բայց դարձյալ՝ առանց հանգման խնդրի գործածելու: Հենց դա էլ պատճառ է դառնում, որ այդ երկկազմ նախադասությանը հաջորդեն ոչ թե երկկազմ, այլ անորոշ-դիմավոր միակազմ նախադասություններ (ընդգծվում են)՝ «Եւ նա ետ կոչել զմար իւր. իբրեւ բերին զմարն, խածեաց զքիթն մօրն. յայնժամ սաստեցին նմա, թէ ընդէ՛ր արարեր զայդպիսի անարէնութիւնդ ընդդէմ ծնաւդի քո » (ՎԱԱ):

հեղինակի խոսքի զուգորդությամբ, թե՛ որպես շարահյուսական ինքնուրույն միավոր:

գ) Անորոշ-դիմավոր միակազմ նախադասությունները հանդես են գալիս միայն որոշակի խոսքային իրավիճակներում, մինչդեռ ընդհանրականդիմավոր նախադասությունները գործածվում են որոշակի խոսքային իրավիճակներից դուրս:

դ) Անորոշդիմավոր միակազմ նախադասության գործողությունն ուղղվում է անորոշ անձանց, բայց կարող են կատարել ոչ միայն ինչ-որ անձինք, այլև մեկ անձ, մինչդեռ ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասության գործողությունն ուղղվում է ընդհանրապես բոլորին, և կարող են կատարել բոլորը:

ե) Անորոշ-դիմավոր և ընդհանրականդիմավոր նախադասությունների ձևավորման հարցում էական դեր ունի ուղղակիորեն մեջբերվող խոսքի բովանդակային կողմը. անորոշ-դիմավոր նախադասություններում առկա է կամ ենթադրվում է տվյալ գործողության կատարման որոշակի կամ մոտավոր ժամանակը, մինչդեռ ընդհանրականդիմավոր նախադասությունների արտահայտության պլանում գործողության կատարման ժամկետ չի սահմանվում, իսկ բովանդակության պլանում ենթադրվում է «միշտ», «ընդհանրապես», «առհասարակ» (և այլն) իմաստները, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են նաև բառային արտահայտություն ունենալ [7, էջ 58]:

զ) Թեև ուղղակիորեն մեջբերվող անորոշդիմավոր և ընդհանրականդիմավոր միակազմ նախադասություններից հետո չի ենթադրվում պատասխան խոսք, սակայն անորոշդիմավոր միակազմ նախադասություններին ավելի հաճախ հաջորդում են դարձյալ անորոշ-դիմավոր միակազմ նախադասություններ, որոնց գերադաս անդամն արդեն արտահայտվում է 3-րդ դեմքով և տեղեկություն է տալիս իրենց նախորդած 2-րդ դեմքով միակազմ նախադասությունների գործողությունները կատարելու կամ չկատարելու մասին:

է) Ուղղակիորեն մեջբերվող անորոշդիմավոր միակազմ նախադասությունների ձևավորմանը նպաստում է նաև նրանց բովանդակային պլանը. այդ նախադասություններով արտահայտվում են տվյալ խոսքային հատվածի տրամաբանությունից բխող մասնակի, իրավիճակային, տվյալ խոսքային իրադրությամբ պայմանավորված և նրանով սահմա-

նափակվող գործողություններ, մինչդեռ ընդհանրականդիմավոր միակազմ նախադասությունների միջոցով արտահայտվում են փորձով ապացուցված, ավանդաբար փոխանցված, ասացվածքային արժեք ունեցող խրատներ, խորհուրդներ, պատգամներ և այլն:

Համառոտագրություններ

ԱԱՕԲ - Ամիրտովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, Ե., 1940:

<https://digilib.aua.am/book/57/%D5%95%D5%A3%D5%B8%D6%82%D5%BF%20%D4%B2%D5%AA%D5%B7%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%A5%D5%A1%D5%B6>

Հ - Հայրեններ, աշխատասիր. Ա. Շ. Մնացականյանի, Ե., 1995:

ՀԹՊ - Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1969: .

http://eanc.net/EANC/search/?interface_language=am

ՍՍԴ - Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, Ե., 1958:

http://haygirk.nla.am/upload/1512-1940/1901-1940/datastanagirq_1918.pdf

ՎԱԱ - Վարդան Այգեկցի, Ժողովածոյ առակաց Վարդանայ

https://hycatholic.ru/pro/biblioteca/%D5%8E%D4%B1%D5%90%D4%B4%D4%B1%D5%86_%D4%B1%D5%85%D4%B3%D4%B5%D4%BF%D5%91%D4%BB_%D4%BA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D5%A1%D5%AE%D5%B8%D5%B5_%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D6%81_%D5%8E%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B5.pdf

Գրականության ցանկ

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965:

2. Աբրահամյան Ս. Գ., Առաքելյան Վ. Դ., Քոսյան Վ. Ա., Հայոց լեզու, II մաս, Շարահյուսություն, Ե., 1975:

3. Աբրահամյան Ս. Գ., Պառնասյան Ն. Ա., Օհանյան Հ. Ա., Բաղիկյան Խ. Գ., Ժամանակակից հայոց լեզու. Շարահյուսություն, հ. 3, Ե., 1976:

4. Առաքելյան Վ. Դ. Հայերենի շարահյուսություն, հ. Բ, Ե., 1964:

5. Գյուլբուդադյան Ս. Վ., Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Ե., 1967:

6. Խաչատրյան Գ. Կ., Միջին հայերենի միակազմ նախադասությունները, Ե, 2022:

7. Խաչատրյան Գ.Կ., Գրաբարի միակազմ նախադասությունները, Ե., 2002:

8. Զահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974:

9. Վարդապետյան Պ. Կ., Միջին գրական հայերենի շարահյուսություն. Պարզ նախադասություն // «Ակնարկներ գրական միջին հայերենի պատմության», հ. Բ., Ե., 1975:

10. Циммерлинг А. В., Имперсональные конструкции и дативно-предикативные структуры в русском языке // “Вопросы языкознания”, 2018, 5:

11. Հովհ. Թումանյան, Պոեմներ

http://eanc.net/EANC/search/?interface_language=am